ներ։ Քաքան թխվում է այժմ իբրև սոսկ սրբուզելի, իբրև դուրեկան, ախորժելի թխվածք։

Քաքան թխում են հէսավ՝ խորիզով։ Խմորի համար ալյուրի հետ խառնում են ձու, կաթ, անպատճառ խաշ ու մի քիչ յուղ։ Խորիզը՝ հէսը պատրաստում են ալյուրից շաքարով կամ այլ քաղցր բանով և կարագով կամ յուղով։ Հէսը դնում են խմոր պատանիների մեջ և այսպես պատանված հում քաքայի երեսին դրոշմում են քաքանախշելիավ, փայտե կամ թրծած կավե մեծ կնիքով, և երեսին, վրայից թէփուրավ՝ փետուրով քսում էին ձվի դեղնուց։ Այս կնիքների նախշերը Զանգեզուրում պարսկական ոճի ազդեցությունն են կրում և զանազանվում են Լոռում և այլ գավառներում գործածվածներից։

Թազա հարսին տուն բերելուց հետո, երբ բարեկամները խօնշանէր էին նվեր ուղարկում, մրգերի հետ մեջտեղը լուս՝ լույս վառած մոմի շուրջը պիտի շարված լինեին բիշի կոչվող փոքրիկ քաքանէր։

Ծիսական հաց էր նաև կրկէնին, որը թխվում էր հունվարի 4-ին, ծննդյան օրվա նախօրյակին, արևի մայր մտնելուց հետո։ Սրա համար խմորը հունցում էին ձեթով, մեծ մասամբ ճղոպուրի խէղէփը՝ ընկույզի փափուկ միջուկը խմորի հետ խառնած։ Խմորի մեջ դնում էին ճուճի կօրինց՝ հոնի կորիզ, կլորում, յէտ ըն տամ և օջախի վրա մոխրի մեջ յէփում, վրայից էլ մոխրով ծածկում—վաղեմի դարերում գործադրված եղանակով։ Այս հաստ ու մեծ հացը այսպես թխելուց հետո երկու երեսն էլ մի շորով մոխրից մաքրում էին և կտրտելով մասերի, բաժանում էին տան անդամների և նույնիսկ անասունների մեջ[8]։

Բացի այս հանդիսավոր տոհիներով թխվող հացերից, թխվում էին առօրյա սպառման համար կանաչեղենով, մեծ մասամբ վայրի բույսերով, խորիզով հացեր, շրէշավ, ժանգալավ[9] և այլն, որոնք փոխարինում են ռուսական կարկանդակներին[10]։

Հացը թխելու աշխատանքներին օգնության էին հրավիրվում հարևան, մեծ մասամբ ազգական, կանայք փոխադարձաբար օգնելու լռելյայն պարտավորությամբ կամ գյուղի չքավոր կանայք, որոնք դրա համար վարձատրվում էին թխած հացով։

Առաջին թխած հացը չէին ուտում առաջ քան յոթ հաց բորանից հանելը, եթե ոչ տանտիրոջ առաջին կինը կմեռներ և նա այնուհետև մի քանի կին կլիներ։ Այսպիսով, առաջին կնոջ կյանքի ընդհատվելը կապվում էր առաջին հացի ոչնչացման հետ։ Հացը գետնին վայր ձգելը մեղք էր, երևի կրկին այն ենթադրությամբ, որ գետնի երեսին վխտում են չար ոգիները և հացը նրանց բաժին կարող է դառնալ։ Հացը չէր կարելի գլխին դնել՝ անբերրիություն կառաջանա։ Աստծուն հաճելի չէ, որ հացը դանակով կտրվի—թանկություն կընկնի, սով կընկնի[11]։ Այս եզրակացությունը բխում է այն մտածողությունից, թե դանակով կտրելը կարող է հացի առատությունն էլ կտրել, կամ խնայողության և ժլատության նշան է, որով կարող է առաջ գալ նաև բերքի ժլատ ստացումը։

Հացով երդվում էին, այն ենթադրությամբ, որ դրժողը կզրկվեր նաև ապագայում հացից՝ սննդի գլխավոր նյութից։

---

8 Տե՛ս «Տոներ» գլուխը։

9 Щавель.

10 Пироги.

11 СМОМПК, вып. XIII, отд. I, էջ 111 և հետև., вып. XVII, отд. II, էջ 200, вып. XXXIV, отд. IV, էջ 98։